ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2019 թվականի N: 27-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՂԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ՄԿՐՏԻՉ ՀԵՐԹԵՎՅՅԱՆԻՆ ԵՎ ՎԻԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ կետի 4-րդ, կետի, 11-րդ և 11.1-ին կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Աղինի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2019 թվականի փետրվարի 15-ի նիստի թիվ 5 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ժամկետը լրանալու կապակցությամբ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Աղինի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամներ՝ ծնողական խորհրդի կողմից առաջադրված Մկրտիչ Հերթևցյանի և Վիգեն Խաչատրյանի լիազորությունները:

2. Խորհրդի անվանական կազմում երեք տարի ժամկետով հաստատել «Աղինի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված Մկրտիչ Հերթևցյանին և Վիգեն Խաչատրյանին:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է